ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Ջրահեռացման ինժեներ

Աշխատանքի վայրը, տեսակը, աշխատաժամանակը

ք. Երևան, հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Կազմակերպել և համակարգել տեղամասի սպասարկման տարածքում ջրահեռացման և հեղեղատար համակարգերի շահագործումը;
- Մասնակցել ջրահեռացման և հեղեղատար համակարգերի ապօրինությունների կորուստների դեմ ուղղված պայքարին;
- Կազմակերպել ջրահեռացման և հեղեղատար համակարգերում վթարավերականգնողական, ինչպես նաև կատարվող հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքները;
- Իրականացնել նախահաշվային փաստաթղթերի ստուգում, արժեքի հաշվարկներ, կատարված աշխատանքների հաշվառում;
- Մասնակցել շինարարության ընթացքում առաջացող նախագծային լուծումների փոփոխության քննարկմանն ու համաձայնեցմանը;
- Մասնակցել ջրահեռացման և հեղեղատար համակարգերից օգտվելու տեխնիկական պայմանների, ինչպես նաև նորմերով և ստանդարտներով սահմանված տեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքներին;
- Մասնակցել նյութածախսի հաշվետվությունների կազմմանը և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն սահմանված ժամկետներում;
- Վերահսկել իր ենթակայությամբ աշխատողների աշխատանքային գործառույթների պատշաճ իրականացումը, կազակերպումը և կարգապահության պահպանումը;
- Վերահսկել և հետևել աշխատանքի պաշտպանության, անվտանգության, հիգիենայի և առողջության ընթացակարգերի պահպանմանը, անհրաժեշտ հրահանգավորումների և անվտանգության դասընթացների անցկացմանը:

Պահանջներ

- Բարձրագույն կրթություն ճարտարագիտության և շինարարության ոլորտում
- Ջրամատակարարման համակարգերի մոնտաժում և վերանորոգում, խողովակաշարերի միացման տեսակներ և մեթոդների իմացություն;
- Ջրամատակարարման համակարգերի տեսակների և նշանակության իմացություն;
- Շինարարության տեխնոլոգիա, կազմակերպում և վարման կանոնների իմացություն
- Թիմային աշխատանք
- Պատասխանատվության զգացում
- Հաղորդակցման հմտություններ

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV hr@vjur.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Զրահեռացման ինժեներ** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին: Հարցազրույցին մասնակցելու համար կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: